Քանդակագործության Ազգային պարկ- թանգարան
Կումայրի պատմամշակութային արգելոց թանգարան ՀՈԱԿ մասնաճյուղ
Գյումրի Գարեգին Նժդեհի 1, artartmek@mail.ru +37455811281,+37496811282

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՄԱՅՆԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ է 23 11 2023 թ.
ԳՐԱՆՑՎԱԾ է N 25297

Ա-017
22.11.23թվ
Գյումրու Քաղաքապետ պ. Վ. Սամսոնյանին

2023թ նոյեմբերի 16 ին կայացավ՝ Զորավար Սեպուհ ռազմավարական վերլուծությունների կենտրոնի կողմից Գյումրուն նվիրաբերվող՝ Կարո Սասունու արձանի տեղադրման նպատակահարմարության վերաբերյալ քննարկում, որին հրավիրված էին Գյումրու մշակույթի ոլորտի մասնագիտական հանրության ներկայացուցիչները:
Մասնակցում էին գրողներ, ճարտարապետներ, թանգարանագետներ, քանդակագործներ, նկարիչներ՝ թվով 20 մասնակիցներ:

Քանդակագործության ազգային պարկ- թանգարանի տնօրենի կողմից մասնակիցներին ներկայացվեց տեղակայման վայրի հետ կապված 3 առաջարկ, որոնք են.
1. Նժդեհի փողոց: Մայթի գազոնի մեջ:
2. Պարոնյան- Իսահակյան փողոցների հատման օղակ:
3. Մուշ-2 թաղամաս: Նախկին հայկական դպրոցին հարող հատված

Նվիրատու՝ պատմական գիտությունների դոկտոր՝ պրոֆեսոր Ա.Ներսիսյանի կողմից ներկայացվեց Կարո Սասունու կյանքն ու ազգանվեր գործունեությունը՝ ինչը դրական տպավորությամբ և ոգևորությամբ ընկալվեց ներկաների կողմից:
Մասնակիցների միահամուռ կարծիքով արձանը տեղադրելն արժանի գնահատական կլինի ազգային գործչի հանդեպ:
Այնուհետև արձանի հեղինակ՝քանդակագործ, Միսակ Մելքոնյանը մեկնաբանեց արձանի կատարման պատմությունը, որը արժանացել էր մասնակիցների դրական գնահատականին և բազմիցս շեշտվել, որ արձանը կատարված է գրագետ և Կարո Սասունու մասին պատկերացումներին համապատասխան:

Մասնակիցները հիմնականում հակված էին արձանը Գարեգին Նժդեհի փողոցում կամ Իսահակյան- Պարոնյան հատման հատվածում տեղադրելուն:
Հնչեց նաև արձանը Սև Բերդի կամ Ղարսի խճուղու հատվածում տեղադրվելու առաջարկ:
Ուշագրավ էր պնդումը, որ արձանի դիմաց պետք է լինի քայլուղի, արձանը պտի ունենա համապատասխան միջավայր և մոտ լինի Շիրակի մարզպետարանին, քանի, որ Կարո Սասունին եղել է Շիրակի առաջին նահանգապետը:
Մասնակիցներից մեկն առաջարկեց արձանը տեղադրել Գյումրու 2րդ դպրոցի

հարևանությամբ՝ մարզպետարանին նայող դիրքով:

Քննարկմանը մասնակցող լրագրողների նյութերը ևս ունեցան դրական արձագանք և սոց ցանցերում չեն եղել առարկություններ կամ հակաճառություն:
Քննարկման մասին հայտարարությունը հասանելի է եղել լայն հանրությանը քննարկումից 1 շաբաթ առաջ:

Ելնելով վերոհիշյալից առաջարկում ենք.
1. Գյումրու համայնքապետերանի քաղաքաշինական խորհրդի կողմից քննարկել արձանի տեղակայման վայրի նպատակահարմարությունը և այդ հիմքով ունենալ արձանի տեղակայման վերաբերյալ որոշում
2. Նվիրատույի հետ համաձայնեցնել Զորավար Սեպուհ կենտրոնի կողմից Գյումրուն արձանի նվիրաբերման իրավական կողմը և մանրամասները
3. Պատվիրել արձանի տեղադրման ճարտապետա-շինարարական նախագիծ, ինչը կներառի որոշված հատվածում արձանի տեղադրման և միջավայրի բարեկարգման աշխատանքները:
4. Ըստ նպատակահարմարության իրականացնել ճարտարապետա- շինարարական նախագծի հանրային քննարկում, իսկ հանրային քննարկման ոչ նպատակահարմարության դեպքում պայմանավորվել արձանի հեղինակի և նվիրատույի հետ, որ մինչև արձանի վերջնական քննարկումն, այն 1 օր չի ամրացվի ու կմնա որոշված վայրում հանրությանը ներկայացնելու նպատակով:
5. Մասնագիտական հանրության կողմից արձանի շուրջ ձևավորված դրական կարծիքը հիմք հանդիսանում արձանը տեղադրելու և ամրապնդում հետագա զարգացումների՝ մասնագիտական եզրակացության հիմքերը

[illegible]

[illegible]

[illegible]

«Zoravar Sepuh» Historical-Political
Analytical Center NGO

«Зоравар Сепух» Историко-Политический
Аналитический Центр НПО

«ԶՈՐԱՎԱՐ ՍԵՊՈՒՀ» ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Երևան, 0070, Երվանդ Քոչար 8/8
РА Ереван, 0070, Ерванд Кочар 8/8,
RA Yerevan, 0070, Ervand Khochar 8/8,
Հեռ./ Тел./ Tel.:, 011-56-25-19. 091-56-25-19

08 ապրիլի, 2022

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՏԻԿԻՆ ՆԱԶԵԼԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Ձեզ եմ դիմում մի խնդրանքով, որը վերաբերում է 20 – րդ դարասկզբի հայ մեծանուն գործիչ, Սարդարապատի ճակատամարտին հայոց հաղթանակին իր նպաստը բերած Հայաստանի առաջին հանրապետության հիմնադիրներից, Շիրակի նահանգապետ, Հայաստանի Փրկության կոմիտեի ներքին գործոց նախարար, սփյուռքահայությանը ձուլումից և ուծացումից փրկելու գործում մեծ ավանդ ունեցած, պատմաբան, գրականագետ, հրապարակախոս, հրատարակիչ Կարո Սասունի հիշատ ի մայր հայրենիքում հավերժացմանը: Տակավին 2016թ. նրա ծննդյան 130- ամյակի առիթով, որը լրացավ 2018-ին, սկզբում լիազորված լինելով նրա որդու, ցավոք այժմ արդեն հանգուցյալ Բաբկեն Սասունու, և ապա՝ թոռան Քրիստափոր Սասունու կողմից, ով ապրում է ԱՄՆ- ում, ես դիմեցի Սփյուռքի նախարարությանը՝ նրա արձանը Երևան քաղաքում տեղադրելու խնդրանքով, որը մտցվեց օրակարգ: Նախարարությունն ինձ առաջարկեց նրան նվիրված միջոցառումների մի փաթեթ, որի մեջ մտցրեց նաև գիտաժողովի կազմակերպումը, իմ գրքի վերահրատարակումը և նրա անունով փողոցի անվանակոչումը, սակայն ոչ մի կոնկրետ քայլեր չձեռնարկեց: Այժմ պատրաստ է Կարո Սասունու 3,5մ բարձրությամբ բրոնզաձույլ արձանը, որի հեղինակն է հայտնի քանդակագործ Միսակ Մելքոնյանը: Քրիստ Սասունոու հետ համախորհուրդ և նրա անունից դիմում եմ Ձեզ խնդրանքով՝ Գյումրի քաղաքի մի նախընտրելի մասում հատկացնել

տարածք այս մոնումենտալ հուշարձանը այնտեղ կանգնեցնելու համար, որը պայքարի, կամքի և հաղթանակի լուռ վկայություն է և կարող է ունենալ քարոզչական մեծ նշանակություն, մանավանդ այս օրերում: Նամակիս կցում եմ նրա համառոտ կենսագրությունը: Հավատացնում եմ Ձեզ, որ անսալով խնդրանքիս, Դուք կկատարեք մի գործ, որը կարևոր նշանակություն կունենա և մեր հերոսական դեմքերի հավերժացման, շատերի կողմից մոռացված հերոսների հիշատակի վերկանգնման և հայրենիք – սփյուռք կապերին նպաստելու առումներով:

Կից ներկայացնում եմ Կարո Սասունու համառոտ կենսագրականը և արձանից լուսանկարներ:

Անհրաժեշտության դեպում կարող եմ այցելել Գյումրի՝ ավելի առարկայական ներկայացնելու խնդիրը:

Խորին հարգանքով՝

«Զորավար Մեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոնի նախագահ, պատմական գիտությունների դոկտոր, ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր՝ Աշոտ Ներսիսյան

Իսահակյան փողոց
Իսահակյան փողոց
Գ. Նժդեհի պողոտա
Գ. Նժդեհի պողոտա
Պարզակի փողոց
Պարզակի փողոց
Գրիգորյան Հայրապետի պողոտա


15
3.4
2.5
Ղոռշյան փողոց
Ղոռշյան փողոց
տեղադրվող հուշարձան
պարիսպ
պարիսպ
պարիսպ
գազատար խողովակ
բնակելի շենք
Իսրայելյան մատուռներ


2400
3000
450


3000
1000
1000
2100
3500


2400
3000
450


3000
1000
1000
2100
3500